Co-funded by the Erasmus+ Programme of the European Union

«Մագիստրոսական կրթության փոխակերպումը հանուն կանաչ և կայուն ապագայի»

THE ERASMUS+ CBHE PROJECT

“Transforming Graduate Education for Green and Sustainable Future” (T-GREEN)

Ծրագրի համարը՝ 101083014 — T-GREEN — ERASMUS-EDU-2022-CBHE

Ֆինանսավորում՝ EU ERASMUS+

Համակարգող՝ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ՃՇՀԱՀ)
NATIONAL UNIVERSITY OF ARCHITECTURE AND CONSTRUCTION OF ARMENIA (NUACA)
Ծրագրի մեկնարկ՝ Մարտի 1, 2023

Ծրագրի տևողություն՝ 36 ամիս

Ծրագրի բյուջե՝ 894,687.00 եվրո

ՀՊՏՀ բյուջե՝ 61,312.00 եվրո

Ծրագրի նպատակները

T-GREEN-ը Հայաստանի բուհերում իրականացվող մագիստրոսական կրթության բարեփոխումներին ուղղված ծրագիր է, որի առանցքում է Եվրոպական «Կանաչ գործարք»-ի քաղաքականությունը: Ծրագրի իրականացումը բուհերին հնարավորություն կտա գործող կրթական ծրագրերից անցում կատարել ապագային միտված, կանաչ և միջառարկայական ուսումնական ծրագրերի՝ խթանելով ուսանողների շարժունությունը, մշակելով համատեղ որակավորմամբ և աստիճանաշնորհմամբ կրթական ծրագրերի իրականացման կառուցակարգեր:

Ծրագրի նպատներից է ազգային և հաստատությունների մակարդակում կրթության քաղաքականության պատասխանատուների, դասավանդողների, հետազոտողների և ուսանողների կարողությունների զարգացումը՝ Կայուն զարգացման նպատակների շրջակա միջավայրի խնդիրները կրթական քաղաքականություններում և կրթական բովանդակությունում ներառելու նպատակով:

Ծրագրի առանցքային նպատակներից է նաև ազգային, բուհական և արտաքին շահառուների գործակցային միջավայրի ստեղծումը, որը կնպաստի օրենսդրական փոփոխություններին, ուղղված երկկողմ և բազմակողմ համատեղ կրթական ծրագրերի մշակմանը և իրականացմանը, ուսանողների շարժունության խթանմանը, կրեդիտների փոխանցմանը և փոխճանաչմանը:

Co-funded by the Erasmus+ Programme of the European Union

Ծրագրի գործընկերները

ՀՀ՝

1. Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան (ՃՇՀԱՀ)
2. Եվրասիա միջազգային համալսարան
3. Երևանի պետական համալսարան
4. Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան
5. Հայաստանի ազգային ագրարային համալսարան
6. Գավառի պետական համալսարան
7. Գորիսի պետական համալսարան
8. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
9. Հայաստանում ֆրանսիական համալսարան
10. Որակի ապահովման ազգային կենտրոն
11. ՀՀ ԿԳՄՍ նախարարություն
12. Էրազմուս ուսանողների ցանց Երևան ՀԿ
13. Հույսի կամուրջ ՀԿ

ԵՄ՝

1. Պորտուգալիայի կաթոլիկ համալսարան (Պորտուգալիա)
2. Յագելոնյան համալսարան (Լեհաստան)
3. Միկոլաս Ռոմերիսի անվան համալսարան (Լիտվա)
4. Միջազգային Հելլենիկ համալսարան (Հունաստան)

Ասոցացված գործընկերներ

1. «ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» պետական ոչ առևտրային կազմակերպություն (Հայաստանի Հանրապետություն)
2. Ժան Մուլեն Լիոն 3 համալսարան (Ֆրանսիա)

Աշխատանքային փաթեթներ

1. **ԱՓ1՝** Կարողությունների զարգացում
2. **ԱՓ2՝** Կայուն զարգացմանը միտված կրթության ոլորտի ազգային փաստաթղթերի մշակում
3. **ԱՓ3՝** Կրեդիտների փոխճանաչման և կրկնակի/համատեղ աստիճանաշնորհման ինստիտուցիոնալ փաստաթղթերի և գործիքակազմի մշակում
4. **ԱՓ4՝** «Կանաչ» մագիստրոսական ծրագրերի մշակում և ուսումնական ծրագրերի վերապրոֆիլավորում և փորձարկում
5. **ԱՓ5՝** Որակի ապահովում և մոնիթորինգ
6. **ԱՓ6՝** Իրազեկում և լուսաբանում
7. **ԱՓ7՝** Մենեջմենթ

Co-funded by the Erasmus+ Programme of the European Union

Ծրագրի ակնկալվող արդյունքները

Ծրագրի իրականացումից ակնկալվում են հետևյալ արդյունքները՝

1. Կարողությունների զարգացում՝ սարքավորումների ձեռքբերում, վարչական և պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստում
2. Կրթական ծրագրերի մշակում, լիցենզավորում, փորձարկում և գործող ծրագրերի վերապրոֆիլավորում
3. Կրկնակի/համատեղ կրթական ծրագրերի ներդրման կանոնակարգի մշակում, կրեդիտների փոխանցման ու ճանաչման կարգի մշակում ձևանմուշներով և գործիքակազմով և միջհամալսարանական կապերի հաստատում և խորացում
4. Իրազեկում և լուսաբանում

ՀՊՏՀ-ի դերը ծրագրում

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը մասնակցելու է ծրագրով նախատեսված բոլոր գործողություններին, ինչպես նաև պատասխանատու է հետևյալ աշխատանքային փաթեթի (ԱՓ4) իրականացման համար՝

«Կանաչ» մագիստրոսական ծրագրերի մշակում և ուսումնական ծրագրերի վերապրոֆիլավորում և փորձարկում

- «Կանաչ» կրկնակի/համատեղ աստիճանի ծրագրերի մշակման մեթոդական սեմինար
- Միջազգային բենչմարքինգ
- ՈԱԱԿ-ի և ԿԳՄՍՆ-ի չափանիշների և ուղենիշների հիման վրա կրթական ծրագրերի մշակում և ուսումնական ծրագրերի վերապրոֆիլավորում
- «Կրթություն և հետազոտություն հանուն կայուն զարգացման. Ինստիտուցիոնալ քաղաքականություն և պրակտիկա» միջազգային առցանց գիտաժողով
- Մագիստրոսական ծրագրերի լիցենզավորում
- Կրկնակի/համատեղ և վերապրոֆիլավորված կրթական ծրագրերի մասին իրազեկման բարձրացում
- ՀՀ կառավարության որոշմամբ անվճար տեղերի հատկացում կրթական ծրագրերում ընդգրկված ուսանողների համար
- Ուսանողների ընդունելություն և նոր կրթական ծրագրերի մեկնարկ

Ծրագրի ՀՊՏՀ համակարգող՝ Ներսես Գևորգյան

Հեռ.՝ +374 10-59-34-13

Էլ.հասցե՝ nerses.gevorgyan@fulbrightmail.org